Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի ---------- ----ի №---
-Ա որոշման

«Հավելված №2
Սահմանված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ

ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

1. Սույն պահանջները սահմանում են Հանրային կազմակերպությունների կողմից էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեությանն առնչվող գնումներին ներկայացվող պահանջները:
2. Սույն պահանջների նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝
   1) Հանրային կազմակերպության համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.
   2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:
3. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.
   1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.
   2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.
   3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:
4. Հանրային կազմակերպության կողմից գնումը կատարվում է, երբ այն նախատեսված է ընկերության գնումների պլանով և անհրաժեշտ է վերջինիս լիցենզավորված գործունեության իրականացման, օրենսդրությամբ կամ Հանձնաժողովի այլ

իրավական ակտերով սահմանված պարտավորությունների կատարման համար, իսկ շենքի (շինության) և (կամ) էներգատեղակայանքի գնման պարագայում նաև, երբ հիմնավորված է համարժեք նոր շենքի (շինության) և (կամ) էներգատեղակայանքի կառուցման տեխնիկատնտեսապես ոչ արդյունավետ լինելը:

5. Հանրային կազմակերպությունը գնումը կազմակերպում և իրականացնում է համաձայն իր կողմից հաստատված գնումների կարգի՝ ինքնուրույն, առանց կողմնակի (միջնորդ) կազմակերպությունների ներգրավման: Գնումների կարգը համապարփակ նկարագրում է գնումների գործընթացի իրականացման համար անհրաժեշտ բոլոր ընթացակարգերը, որոնք չպետք է հակասեն սույն պահանջներին, «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին, իսկ Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրով սահմանված շեմը գերազանցող գնումների դեպքում՝ նաև այդ համաձայնագրի պահանջներին:
6. Հանրային կազմակերպությունն իր պաշտոնական կայքում, «Գնումների մասին» օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով գործող ինտերնետային կայքում (procurement.am), իսկ սույն պահանջների 50-րդ կետով նախատեսված համակարգերից մեկով գնումներն իրականացնելու դեպքում՝ նաև այդ համակարգում հրապարակում է՝
    1) Հանրային կազմակերպության յուրաքանչյուր ֆինանսական տարվա գնումների պլանը (Հանրային կազմակերպության անվանման և գնումների պլանի տարեթվի վերաբերյալ նշումով)՝ մինչև այդ տարվա փետրվարի 15-ը: Փոփոխությունների դեպքում գնումների պլանի լրամշակված տարբերակը ենթակա է վերահրապարակման՝ դրանք հաստատվելուց 5 աշխատանքային օրվա ընթացքում,
    2) Հանրային կազմակերպության կողմից հաստատված գնումների կարգը՝ այն հաստատվելուց և (կամ) նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում,
    3) մրցակցային ընթացակարգերով գնման գործընթացի կազմակերպման մասին հայտարարությունները՝ այդ թվում՝ անգլերեն և ռուսերեն լեզուներով, և հրավերները (պայմանագիր կնքելու նպատակով մասնակցին առաջարկվող պայմանները)՝ սույն կետում նշված կայքերում՝ միաժամանակ,

4) մրցակցային ընթացակարգերով և բաց շրջանակային համաձայնագրով գնման գործընթացի կազմակերպման արդյունքում.

ա) պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունները՝ պայամանագիր կնքելու որոշման կայացման պահից,

բ) շահերի բախման բացակայության մասին հայտարարությունները՝ պայմանագիր կնքելու որոշման կայացման պահից,

գ) կնքված պայմանագրերի մասին հայտարարությունները՝ պայմանագրերը կնքվելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում,

դ) գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու դեպքում՝ ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը՝ հայտարարելու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

5) Մրցակցային ընթացակարգերով և բաց շրջանակային համաձայնագրով գնման գործընթացի հայտերի բացման և գնահատման նիստերի արձանագրությունները՝ նիստին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

7. Հանրային կազմակերպությունն ապահովում է, որ սույն պահանջների 6-րդ կետում նշված տեղեկատվությունը նույն կետով նախատեսված կայքերում հրապարակելիս տեղեկատվության հրապարակման պահին կայքը ինքնաշխատ եղանակով տեսանելի դարձնի հրապարակման ամսաթիվը, ամիսը, տարին և ժամը:

8. Սույն պահանջների 6-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված գնումների պլանը, որպես կանոն, հրապարակվում է XLS (իքսէլէս), XLSX (էքսէլէսիքս) կամ ODS (օդիէս) ֆորմատների ֆայլերի տեսքով, հայկական unicode (յունիկոդ) տառատեսակով:

9. Գնումների պլանը պարունակում է գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մասին ընդհանուր տեղեկատվություն, այդ թվում՝ գնման առարկայի անվանումը (մրցույթով իրականացվող գնումների դեպքում՝ նաև առանձին չափաբաժինների անվանումները), հատկանիշները, քանակական բնութագրիչները, գնման ձևը, ընտրված գնման ձևի կիրառման հիմքը (հղում տալով իր գնումների կարգի համապատասխան կետին կամ կետերին), մրցակցային ընթացակարգով գնման դեպքում դրա անցկացման, իսկ մեկ անձից գնման դեպքում՝ ձեռքբերման կամ պայմանագրի կնքման ժամանակահատվածը:

10. Գնումների պլանի կազմման նպատակով Հանրային կազմակերպությունը գնման առարկայի շուկայական արժեքի որոշման նպատակով առնվազն երկու աղբյուրից կատարում է շուկայի ուսումնասիրություն, որի արդյունքները (ոչ վաղ, քան նախորդող օրացուցային տարում իրականացված) գրանցվում են ընկերության կողմից և դառնում գնման վերաբերյալ փաստաթղթերի անբաժանելի մաս՝ բացառությամբ 15-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքի: Շինարարական աշխատանքների դեպքում գնումների պլանը կազմվում է համապատասխան նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և (կամ) գնահաշվարկների հիման վրա, որոնք կազմվել են են ոչ վաղ, քան նախորդ օրացուցային տարում:
11. Գնում իրականացնելիս Հանրային կազմակերպության կողմից սահմանվող հրավերի ու պայմանագրի հիմնական պայմանները, այդ թվում՝ գնումների մասնակիցներին ներկայացվող որակավորման և ընտրված մասնակցին որոշելու համար կիրառվելիք չափանիշները, գնման առարկայի բնութագրերը, քանակը, գնման գործընթացների ժամկետները և վճարման պայմանները պետք է լինեն հստակ և ողջամիտ, ապահովեն մրցակցային միջավայր՝ հաշվի առնելով գնման գործընթացին առնչվող բոլոր հանգամանքները:
12. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ գնման առարկայի հատկանիշները հնարավորինս պետք է ներառեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա: Դրանք կարող են սահմանվել նաև որպես կատարողական և (կամ) գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:
13. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի,

ծագման երկրի կամ կոնկրետ աղբյուրի, կամ արտադրողի, բացառությամբ այն դեպքերի, երբ գնման առարկայի բնութագրումն անհնար է առանց դրանց: Հղումներ և պահանջներ օգտագործելու դեպքում ներկայացվում են որպես համարժեք առաջարկվող ապրանքների ֆիրմային անվանումը, մոդելը և արտադրողը:

14. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ Հանրային կազմակերպությունը հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:
15. Գնումը կատարվում է՝
    1) մրցակցային ընթացակարգերով՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված՝ էլեկտրոնային գնումների համակարգի (www.armeps.am կայքի) կամ գնումների և աճուրդների համար նախատեսված՝ սույն պահանջների 50-րդ կետում ներառված միջազգային էլեկտրոնային համակարգերի միջոցով,
    2) մեկ անձից՝ սույն պահանջների 22-րդ կետով նախատեսված դեպքերում
    3) բաց շրջանակային համաձայնագրով՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված՝ էլեկտրոնային գնումների համակարգի (www.armeps.am կայքի) կամ գնումների և աճուրդների համար նախատեսված՝ սույն պահանջների 50-րդ կետում ներառված միջազգային էլեկտրոնային համակարգերի միջոցով:
16. Մրցակցային ընթացակարգերով գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝
    1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.
    2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:
17. Մրցակցային ընթացակարգերով գնում կատարելիս Հանրային կազմակերպությունը, հաշվի առնելով գնման բնույթն ու բարդությունը, ենթադրվող ենթապայմանագրերի չափը, պետք է բավարար ժամանակ տրամադրի մատակարարներին՝ մասնակցությանը պատրաստվելու և ընդունելի մրցութային հայտեր ներկայացնելու համար, որը չպետք է պակաս լինի սույն պահանջների 18-րդ կետով սահմանված ժամկետից:

18. Մրցակցային ընթացակարգերով գնմանը մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետը, հաշված նախատեսված գնման գործընթացի կազմակերպման մասին հայտարարության և հրավերի՝ սույն պահանջների 6-րդ կետում նշված կայքերում հրապարակման ամսաթվից, չպետք է լինի՝
    1) 5 աշխատանքային օրից պակաս, եթե գնման գինը չի գերազանցում 70 միլիոն դրամը (ներառյալ)՝ առանց ԱԱՀ.
    2) 10 աշխատանքային օրից պակաս՝ եթե գնման գինը գերազանցում է 70 միլիոն դրամը՝ առանց ԱԱՀ:
19. Մրցակցային եղանակով գնմանը հայտ ներկայացրած մասնակցի կողմից հայտը անգլերեն կամ ռուսերեն ներկայացված լինելը հիմք չէ վերջինիս մասնակցության մերժման համար:
20. Մրցակցային ընթացակարգերով իրականացվող գնումների մասնակիցը, ի թիվս այլ պահանջվող փաստաթղթերի և տեղեկատվության, ներկայացնում է. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում՝
    1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը հայտով ներկայացնում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի համաձայն՝ իրավաբանական անձանց պետական

ռեգիստրի գործակալությունում գրանցած իրենց իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը.

2) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցը հայտով ներկայացնում է գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր:

21. Մրցակցային ընթացակարգերով իրականացվող գնումների մասնակիցը, ի թիվս այլ պահանջվող փաստաթղթերի և տեղեկատվության, ներկայացնում է իր կողմից հաստատված ցանկ՝ հանրային կազմակերպության հետ փոխկապակցված բոլոր անձանց վերաբերյալ՝ նշելով յուրաքանչյուր անձի հետ փոխկապակցվածության ձևը և տեսակը: Սույն կետով նախատեսված ցանկում կեղծ, ոչ ամբողջական կամ ոչ հավաստի տեղեկություններ կամ տվյալներ ներկայացնելը հիմք է սույն հավելվածի 49-րդ կետով նախատեսված ընթացակարգը կիրառելու համար:

22. Գնումները կարող են կատարվել մեկ անձից, երբ՝

1) ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, հրատապությունից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը կարող է հանգեցնել Հանրային կազմակերպության կողմից ստանձնած պայմանագրային, օրենքով, կամ այլ իրավական ակտով սահմանված պարտավորությունների խախտման՝ պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել.

2) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքերում.

3) ձեռք են բերվում ապրանքների լրացուցիչ քանակություններ, տեխնոլոգիական ամբողջականությունը համալրող խմբաքանակներ, որոնք նախատեսված են մատակարարի կողմից նախապես մատակարարված սարքավորումները (կառուցվածքները) փոխարինելու կամ լրացնելու համար, ինչպես նաև իրականացվում են մատուցվող ծառայությունների ծավալների ճշգրտում և (կամ) ընդլայնում, և սկզբնական մատակարարի (ծառայություն մատուցողի)

փոփոխությունը կպարտադրի Հանրային կազմակերպությանը ձեռք բերել այլ հատկանիշներ ունեցող ապրանքներ կամ ծառայություններ, ինչը շահագործման ու պահպանման առումով կառաջացնի անհամատեղելիություն կամ անհամաչափ տեխնիկական բարդություններ՝ պայմանով, որ դրանց գինը չգերազանցի սկզբնական պայմանագրի ընդհանուր գնի 10 տոկոսը, իսկ շինարարական աշխատանքների դեպքում՝ 20 տոկոսը: Ընդ որում, միևնույն անձից սույն ենթակետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ, իսկ լրացուցիչ ապրանքների գինը չի կարող սահմանվել ավելի, քան նախատեսված է պայմանագրով.

4) իրականացվում է էներգատեղակայանքի գնում՝ համաձայն սույն պահանջների 28-րդ կետի.

5) էլեկտրական էներգիայի, բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման համակարգերի նախագծով նախատեսված շենքերի, շինությունների կամ այլ օժանդակ կառույցների կառուցման համար իրականացվում է հողամասի ուղղակի վաճառքով գնում պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնից.

6) դա նախատեսված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև Հանրային կազմակերպության գնումների կարգերով, եթե չի հակասում «Գնումների մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակներին և սկզբունքներին.

7) երկու անգամ անընդմեջ գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր չի կնքվում: Ընդ որում, նշված դեպքում մեկ անձից գնումը իրականացվում է մրցույթի մասնակիցներին առաջադրված պահանջներով:

23. Գնման պահանջի դադարեցման հիմքով գնման ընթացակարգը չկայացած կարող է հայտարարվել միայն Հանձնաժողովի դրական դիրքորոշման պարագայում, ընդ որում, գնման պահանջի դադարեցման հիմքով Հանձնաժողով դիմելու դեպքում տվյալ գնման գործընթացը կասեցվում է:

24. Սույն պահանջների 23-րդ կետում նշված դիրքորոշման ստացման նպատակով Հանրային կազմակերպությունը անհրաժեշտ հիմնավորումներով դիմում է Հանձնաժողով, որը 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է իր դիրքորոշումը:

25. Սույն պահանջների 6-րդ կետում նշված համակարգի միջոցով հանրային կազմակերպության կազմակերպված գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում սահմանված հայտերը ներկայացնելու վերջանաժամկետը լրանալու պահի դրությամբ համակարգը խափանված է:
26. Սույն պահանջների 22-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված հողամասի գնման անհրաժեշտություն ծագելու դեպքում Հանրային կազմակերպություն հանդիսացող էլեկտրական էներգիայի, բնական գազի հաղորդման (փոխադրման) ու բաշխման լիցենզիա ունեցող անձը սահմանված կարգով դիմում է պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմին:
27. Սույն պահանջների 25-րդ կետի համաձայն սահմանված կարգով ներկայացված դիմումը մերժվելու դեպքում հողամասի գնումը կատարվում է սույն պահանջների 15-րդ կետի 1-ին ենթակետով նշված ընթացակարգով:
28. Էներգատեղակայանքի (այդ թվում՝ շենք-շինության, որտեղ տեղակայված է էներգատեղակայանքը, իսկ Երևան քաղաքում՝ նաև էներգատեղակայանք տեղակայելու համար անհրաժեշտ շենք-շինության) գնման անհրաժեշտության դեպքում, նախքան գնումն իրականացնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ էներգատեղակայանքի գնումը որպես պարտադիր պահանջ նախատեսված է Հանձնաժողովի հաստատած՝ էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կամ բնական գազի մատակարարման և օգտագործման կանոններով, Հանրային կազմակերպությունը Հանձնաժողովի դիրքորոշումը ստանալու նպատակով դիմում է վերջինիս՝ ներկայացնելով.
   1) գնման նպատակը.
   2) գնում կատարելու անհրաժեշտության տեխնիկատնտեսական հիմնավորումները, այդ թվում՝ համարժեք նոր էներգատեղակայանքի կառուցման տեխնիկատնտեսապես ոչ արդյունավետ լինելու վերաբերյալ.
   3) գնման ծավալի, իրականացման ժամանակացույցի և սպասվող արդյունքների գնահատականը.
   4) գնման ֆինանսավորման աղբյուրները և պայմանները.

5) լիազոր մարմնի կողմից անշարժ գույքի գնահատողի որակավորում ստացած անձի (անձանց) (այսուհետ՝ Գնահատող) եզրակացությունը (եզրակացությունները):

29. Այն դեպքում, երբ սույն պահանջների 28-րդ կետի համաձայն գնվող էներգատեղակայանքի՝ Հանրային կազմակերպության կողմից իրականացված շուկայի ուսումնասիրության արդյունքում ձևավորված արժեքը չի գերազանցում 5 մլն դրամը (ներառյալ)՝ առանց ԱԱՀ, անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել առնվազն մեկ, 5-20 մլն դրամի (ներառյալ)՝ առանց ԱԱՀ, դեպքում՝ առնվազն երկու և 20 մլն դրամից՝ առանց ԱԱՀ, բարձր արժեքի դեպքում՝ առնվազն երեք գնահատողի եզրակացություն (եզրակացություններ): Էներգատեղակայանքի գնման ուղղությամբ ներդրումները չեն կարող գերազանցել գնահատողի եզրակացությունում (եզրակացություններում) նշված նվազագույն արժեքը:

30. Հանձնաժողովը, սույն պահանջների 28-րդ կետում նշված բոլոր փաստաթղթերը ստանալու պահից, 15 աշխատանքային օրվա ընթացքում Հանրային կազմակերպություն է ներկայացնում գնման վերաբերյալ իր դիրքորոշումը:

31. Սույն պահանջների 30-րդ կետի համաձայն բացասական դիրքորոշում ներկայացվելու դեպքում իրականացված գնումների ուղղությամբ ներդրումները չեն ներառվում Հանրային կազմակերպության սակագնի հաշվարկներում: Հանձնաժողովն իրավասու է գործարքի իրականացմանը համաձայնություն տալու մասին դիրքորոշմամբ սահմանել դրա պարտադիր պայմանները:

32. Արգելվում է գնումների մասին օրենսդրությամբ սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը Հանրային կազմակերպության կողմից կազմակերպված գնման միևնույն գործընթացին՝ բացառությամբ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

33. Հանրային կազմակերպությունը բացառում է գնման գործընթացի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում ներգրավված իր ներկայացուցչի և գնման գործընթացին մասնակցող անձանց միջև շահերի բախումը:

34. Սույն պահանջների իմաստով շահերի բախում է համարվում ցանկացած հարաբերություն, որը կարող է նպաստել Հանրային կազմակերպության ներկայացուցչի կողմից գնման գործընթացին մասնակցող անձի օգտին կամ դեմ գործողություններ կատարելուն կամ որոշումներ կայացնելուն:

35.Հանրային կազմակերպությունը.

1) իր այն ներկայացուցիչների համար, որոնք ներգրավված են գնման գործընթացում, սահմանում է այնպիսի կանոններ, համաձայն որոնց՝ նշված անձինք շահերի բախման պարագայում անմիջապես տեղեկացնում են Հանրային կազմակերպությանը, որի պարագայում վերջինս բացառում է այդ անձանց մասնակցությունը գնման գործընթացին,
2) բացառում է մրցակցային ընթացակարգերով և բաց շրջանակային համաձայնագրով գնումների դեպքում գնահատող հանձնաժողովի անդամի կամ քարտուղարի մասնակցությունը գնահատող հանձնաժողովի աշխատանքներին, եթե հանձնաժողովի գործունեության ընթացքում պարզվում է, որ վերջիններիս հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը կամ իրենց մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված անձը (ծնող, ամուսին, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ, ինչպես նաև ամուսնու ծնող, երեխա, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) կամ այդ անձի հիմնադրած կամ բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունը տվյալ ընթացակարգին մասնակցելու համար ներկայացրել է հայտ: Վերոնշյալ փոխկապակցվածության առկայության պայմաններում՝ տվյալ ընթացակարգի առնչությամբ շահերի բախում ունեցող գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարն անհապաղ ինքնաբացարկ է հայտնում: Հանձնաժողովի անդամները և քարտուղարը ստորագրում են շահերի բախման բացակայության մասին հայտարարություն, որը հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հրապարակվում է սույն պահանջների 6-րդ կետում նշված կայքերում,
3) բացառում է մրցակցային ընթացակարգերով և բաց շրջանակային համաձայնագրով գնումների դեպքում իր գործադիր մարմնի ներկայացուցիչների, գլխավոր տնօրեն, տնօրենի, նրանց տեղակալի(ների), ում համակարգման ներքո է գտնվում գնման տվյալ ընթացակարգի կազմակերպմամբ հանդես եկած ստորաբաժանումը, ստորաբաժանման ղեկավարի և հայտ ներկայացրած մասնակցի հետ ուղղակի և անուղղակի փոխկապակցվածությունը: Հայտերի բացումից հետո նշված շրջանակում ներառված պաշտոնյաները ևս ստորագրում են շահերի բախման բացակայության կամ առկայության մասին

հայտարարություններ: Վերոնշյալ անձանց՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի անդամի կամ քարտուղարի հետ շահերի բախման առկայության պայմաններում, գնահատող հանձնաժողովի անդամը կամ քարտուղարը պետք է հայտնեն ինքնաբացարկ: Գնման ընթացակարգի մասնակցի՝ պատվիրատուի ղեկավարի, տեղակալի կամ ստորաբաժանման ղեկավարի հետ շահերի բախման առկայության հիմքով գնման ընթացակարգի տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

36. Գնումների գործընթացին մասնակցող անձանց ներկայացրած տվյալները համարվում են հավաստի, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:
37. Գնումների գործընթացի հետ կապված Հանրային կազմակերպության բոլոր փաստաթղթերը և գործողությունները փաստաթղթավորվում են առնվազն 3 տարի պահպանման ժամկետով, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:
38. Մրցակցային եղանակով գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Նիստի արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:
39. Հանրային կազմակերպության կողմից հրավերով սահմանվում է կնքվելիք պայմանագրում ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, որը չպետք է պակաս լինի 20 օրացուցային օրից, բացառությամբ հրատապ համարվող գնումների դեպքում իրականացվող մատակարումների ժամկետների:
40. Սույն պահանջների իմաստով բաց շրջանակային համաձայնագիր է համարվում պայմանագիր կնքելու նպատակով կնքվող նախնական պայմանագիրը:
41. Գնման առարկան հանրային կազմակերպության կողմից բաց շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում հանրային կազմակերպության ղեկավարը՝
    1) հաստատում է գնումների հայտարարության և հրավերի տեքստերը,
    2) նշանակում է տվյալ գնման գործընթացի քարտուղար,

3) գնումների հայտարարության և հրավերի տեքստերը դրանք հաստատվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը հրապարակում է սույն պահանջների 6-րդ կետում նշված կայքերում,

42. Սույն պահանջների 6-րդ կետում նշված կայքերում հրապարակված բաց շրջանակային համաձայնագրերի վերաբերյալ գնումների հայտարարությունը և հրավերը գործում են անժամկետ:

43. Հրավերը գնման բնութագրեր չի ներառում, և գնման առարկան հրավերում նկարագրվում է ըստ դրա՝ հանրային կազմակերպության կողմից բաց շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում նշված սահմանման: Ընդ որում՝

1) հրավերը հաստատելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ հայտերի ներկայացման, գնահատման, ընտրված մասնակցի որոշման և պայմանագրի կնքման գործընթացն իրականացվում է հանրային կազմակերպության հաստատած գնումների կատարման կարգով սահմանված պայմաններով.

2) հրավերով սահմանվում են ինչպես գրանցման դիմումի, այնպես էլ հայտով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

44. Գնումների հայտարարության և հրավերի հրապարակումից հետո գնման գործընթացին մասնակցելու ցանկություն ունեցող անձը որպես հնարավոր մասնակից գրանցվելու նպատակով էլեկտրոնային եղանակով գնումների հանրային կազմակերպությանն է ներկայացնում գրավոր դիմում և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին բավարարող փաստաթղթերը:

45. Հայտը էլեկտրոնային եղանակով ստացվելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հանրային կազմակերպությունը մասնակցի հետ կնքում է բաց շրջանակային համաձայնագիր և այն կնքելուն հաջորդող աշխատանքային օրը տվյալ մասնակցի տվյալները հրապարակում է սույն պահանջների 6-րդ կետում նշված կայքերում ՝ բաց շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակում:

46. Բաց շրջանակային համաձայնագրով նախատեսվում է, որ՝

1) բաց շրջանակային համաձայնագիր կնքած մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ.

2) Հետագայում մրցույթին մասնակցելու հայտը ներկայացվում է մրցույթի անցկացման մասին ծանուցվելու օրվան հաջորդող առնվազն երեք աշխատանքային օրվա ընթացքում.
3) մասնակիցը կարող է դադարեցնել բաց շրջանակային համաձայնագիրը՝ դրա մասին գրավոր կամ էլեկտրոնային եղանակով ծանուցելով հանրային կազմակերպությանը: Համաձայնագրի դադարեցումն ավտոմատ կերպով չի դադարեցնում համաձայնագրի հիման վրա նախկինում կնքված պայմանագրերը: Բաց շրջանակային համաձայնագիրը դադարում է, դրա վերաբերյալ դիմումը հանրային կազմակերպություն մուտքագրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Այդ ընթացքում հանրային կազմակերպությունը մասնակցի մասին տվյալները հեռացնում է բաց շրջանակային համաձայնագրեր կնքած անձանց ցուցակից:

47. Բաց շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու դեպքում՝ հայտերի ներկայացման, գնահատման, ընտրված մասնակցի որոշման ու պայմանագրի կնքման գործընթացն իրականացվում է հանրային կազմակերպության հաստատված կարգով սահմանված պայմաններով:

48. Հանրային կազմակերպություններն իրավունք ունեն իրենց գնումների կարգերով նախատեսել, որ գնման ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են՝
1) Ֆինանսների նախարարության հրապարակած՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,
2) Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

49. Այն դեպքում, երբ սույն պահանջներով նախատեսված մոնիթորինգի կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Հանրային կազմակերպությունը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը

հայտնի լինելու դեպքում օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Հանրային կազմակերպությունը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Հանրային կազմակերպության կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Սույն կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում Հանրային կազմակերպությունը այդ մասին ծանուցում է իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանագիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

50. Սույն պահանջների 15-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված համակարգերն են Գարտների (Gartner Magic Quadrant) ազատ հասանելիության ցուցակի առաջին տասը կազմակերպությունների կողմից մշակված և օգտագործվող հետևյալ համակարգերը, որոնք պետք է բավարարեն սույն պահանջների 1-ին հավելվածում նշված պայմաններին.
    1) Կուպա (Coupa)՝ http://www.coupa.com
    2) Էս Էյ Փի Արիբա (SAP Ariba)՝ http://www.sap.com
    3) Ջի Ի Փի Սմարթ (GEP SMART)՝ https://www.gep.com
    4) Փի Էռ Էմ 360 (PRM360 Simplified Procure-to-Pay Suite)՝ http://www.prm360.com
    5) Ջագգաեր Ուան (JAGGAER ONE)՝ https://www.jaggaer.com
    6) Զայկուս (Zycus Source to Pay Suite)՝ https://www.zycus.com/
    7) Իվալուա (Ivalua Source-to-Pay)՝ http://www.ivalua.com
    8) Օրաքլ (Oracle Fusion Cloud Procurement)՝ http://www.oracle.com
    9) Էսքեր (Esker Source-To-Pay)՝ https://www.esker.com/
    10) Պրոակտիս Ռեգո (Proactis Rego)՝ http://www.proactis.com
51. Սույն պահանջներով նախատեսված համակարգի ընտրություն կատարելու իրավասությունը վերապահված է Հանրային կազմակերպությանը, և այդ ընտրության մասին վերջինս նախապես պետք է տեղեկացնի Հանձնաժողովին:
52. Հանձնաժողովը Հանրային կազմակերպությունների և վերջիններիս կողմից օգտագործվող համակարգերի ցանկը տրամադրում է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարկելու նպատակով:

Հավելված 1
Հանրային կազմակերպությունների
գնումների կարգերի
նկատմամբ պահանջների

Հանրային կազմակերպությունների կողմից օգտագործման ենթակա էլեկտրոնային գնումների համակարգին ներկայացվող պահանջները

1. Հանձնաժողովը պետք է ունենա առնվազն համակարգի դիտորդի լիազորություններ՝ համակարգում իրականացված գործընթացների վերլուծության և աուդիտի համար:

2. Համակարգերը պետք է առնվազն բավարարեն հետևյալ ֆունկցիոնալ պահանջներին՝

1) մասնակիցների ինքնագրանցման հնարավորություն.

2) մրցույթի հայտարարության և հրավերի, ներառյալ դրանցում կատարված փոփոխությունների հղման՝ հրապարակման պահին ինքնաշխատ եղանակով գրանցված մասնակիցներին տրամադրում և նույն հղման՝ procurement.am հասցեով գործող տեղեկագրի համապատասխան բաժնում հրապարակման հնարավորություն.

3) մրցույթը հայտարարվելուց հետո, եթե որևէ մասնակից գրանցված չէ համակարգում և մրցույթի վերաբերյալ տեղեկատվությունը ստանում է նշված կայքից, ապա համակարգում ինքնագրանցվելուց հետո պետք է ունենա հայտ ներկայացնելու հնարավորություն.

4) մասնակիցների կողմից հայտարարության և հրավերի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով համակարգի միջոցով գնահատող հանձնաժողովին դիմելու և պատասխան ստանալու հնարավորություն.

5) հրավերով՝ դրանում փոփոխություններ կատարելու կամ մասնակիցների կողմից պարզաբանումներ ստանալու համար սահմանված ժամկետները լրանալուց հետո նման գործողություններ կատարելու հնարավորության բացառում.

6) Հայտերը պետք է ներկայացվեն համակարգի միջոցով՝ մինչև դրանց ներկայացման համար սահմանված վերջնաժամկետի ավարտը: ՀՀ ռեզիդենտները փաստաթղթերը պետք է հաստատեն էլեկտրոնային ստորագրության միջոցով, իսկ ոչ ռեզիդենտները՝ բնօրինակից սկանավորված տարբերակով.

7) Մասնակցի կողմից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը այն հետ վերցնելու կամ փոխելու հնարավորություն.

8) ներկայացված հայտերի, ներառյալ մասնակիցների թվաքանակի, վերաբերյալ տեղեկատվության՝ հայտերը բացվելուց հետո հասանելի դառնալու հնարավորություն.

9) հայտերը բացվելուց հետո համակարգում դրանց անվճար հասանելի դառնալու հնարավորություն.

10) համակարգում հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատում և դրա արդյունքների՝ մասնակիցներին ծանուցում.

11) ընտրված մասնակցին պայմանագրի շնորհման և կնքման ծանուցման տրամադրման հնարավորություն.

12) պայմանագրի կատարման գործընթացը արտացոլող հիմնավորող փաստաթղթերի՝ համակարգով շրջանառելու հնարավորություն: ՀՀ ռեզիդենտները փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային ստորագրության միջոցով, իսկ ոչ ռեզիդենտները՝ բնօրինակից սկանավորված տարբերակով:»: